*կա[ւ]ս[1]՝ գալով[2] ի մտից կուսէ, ի լեռնէն, որ կոչի Ջիգոն Վասիլէոն[3], եւ նախ քան զանկանել[4] նորա յԵփրատ՝ խառնի ի նա գետն Կառամինոն[5], որ գա[յ] ի Տաւր[ո]ս[6] լե՛՛ռնէ[7]:* 128 *Եւ ընկալեալ յԵփրատ՝ գնա[յ] ընդ հարաւ, հատանէ զլեառն Տաւրոս[8], յորում տեղ[ւ]ոջ[9] գտանի ակն բիւրեղ:* 129 *Եւ ունի Ձոր[ր]որդ[10] Հայք երէս[11] եւ հաւս եւ [ձկունս, եւ][12] ի գազանաց՝ զառիւծ:*

130 *Գ. Աշխարհ՝ Աղձնիք, յելից[13] Միջագետաց, եւ հիւսիսեաւ՝ առ Դկղաթով:* 131 *Ունի գաւառս տասն[14]՝ զՆփռետ[15], զԱղձն, ընդ որոց մէջն իջանէ գետն Քաղիրթ, զոր Շիթ[իթ]մա[յ][16] կոչեն Տաճիկք, այսինքն՝ արիւն*[24բ]*արբու, յետ որո[յ]՝ Քաղ[17] գաւառ. որ[18] ի լերինն՝ ունի զԿէթիկ, զՏատիկս, զ՚՚Ազնուաց ձոր[19], զԵրխեթս, [զԳզեղ[ս]][20], զՍալ[ն]աձոր[21], զՍանասուն:* 132 *Ունի երկաթ [եւ Նաւթ][22] քաջ եւ գղթոր, եւ ի հաւուց՝ դեհուկ:*

133 *Դ. Աշխարհ՝ Տար[ո]ւբերան[23], յելից Ձոր[ր]որդ[24] Հա[յ]ոց:* 134 *Ունի գաւառս վեշտասան[25]՝ զԽոյթ. զԱսպակունեաց[26] ձոր. զՏարաւն, յորում գա[յ] գետն Մեղ եւ անկանի յԵփրատ[27]. որ ըստ հիւսի՛սոյ[28]՝ Աշմունիք, առ Սրմանձ[29] լերամբ[30], որ կոչի Կատար երկրի, յորմէ յոյժ բղխեն աղբիւրք. որոց ըստ հիւսիսի՝ Մարդաղի, առ Մե-*

---

1 *VS* Կաւկաս *փխ* Կաւկա[ւ]ս *(վեր., տե՛ս բոլորագիր* **աւս → աս** *եւ հմմտ. նախ. Ե.60. ըստ Երեմեանի՝ երկու տեղում էլ վերականգնելի է* Կիւկկաս*)*

2 *V* գոլով *փխ* գալով *(վեր. Սուքրեանի. տե՛ս ուշ երկաթագիր* ***Ա → Ո****)*

3 *S* Վասիթէոն *փխ* Վասիլէոն *(V. գրիչը բառի հինգերորդ տառը կա՛մ նախ գրել է* **լ***, ապա ուղղաձիգ ստեղնը բարձրացնելով՝ ձեւաւորել* **թ***, կա՛մ, գուցէ՝ առկայ* **թ***-ն է դարձրել* **լ** *(ուրեմն՝* Վասիլէոն*). յաջորդող* **է***-ն էլ գրուած է* **թո***-ի վերեւում. Սուքրեանի ծանօթագրմամբ՝* «Ի վեր անդր կոչեաց *Իգոն եւ Բասիլիկոն*»*. հմմտ. նախ. Ե.60)*

4 *VS* զանգանել *փխ* զանկանել *(վեր.՝ ըստ այլոց, օր.՝ նախ. Ե.58, 307)*

5 *Նախ. Ե.60-ում գետի անունը* զԿառոմոսոս *էր*

6 *V* Տորս, *S* Տորոս *փխ* Տաւր[ո]ս *(վեր.՝ ըստ այլոց, տե՛ս մէկ տող յետոյ կամ նախ. Ե.39, 53, 59, 150 եւ հմմտ. բանաւոր* **ԱԻ/Օ → Ո***. Սուքրեանի վրիպեալ ծանօթագրմամբ՝* «Յօր. *Ի ստորս*»*)*

7 *V* լեառնէ *փխ* լեռնէ *(վեր. Սուքրեանի՝ ըստ այլոց, օր.՝ նախ. Բ.9, 24, 29, Գ.58, Դ.23, Ե.78 եւն)*

8 *V* Տօրոս, *S* Տորոս *փխ* Տաւրոս *(վեր.՝ ըստ այլոց)*

9 *V* տեղոջ *փխ* տեղւոջ *(վեր. Սուքրեանի՝ ըստ այլոց, տե՛ս նախ. Բ.30, Գ.54, Ե.324)*

10 *V* Ձորորդ *փխ* Ձորրորդ *(վեր. Սուքրեանի՝ ըստ այլոց. տե՛ս նախ. Ա.8, Ե.115 եւն)*

11 *VS* էրէս *փխ* երէս *(վեր.՝ ըստ նախ. Ե.121, 152)*

12 *VS չիք* ձկունս եւ *(վեր. ըստ համառ., տե՛ս* **եւ … եւ***)*

13 *S* յելից կայ *(V. գրիչն, իրօք, գրել է* **կա***, բայց յետոյ փորձել է խնամքով քերել-մաքրել դա. հմմտ., օր.՝ յաջորդ գլխի սկիզբն՝ առանց* կայ*-ի)*

14 *V* ժ̅

15 *ADEPv* զԱրզն, զՆփրկերտ *փխ* զՆփռետ, զԱղձն *(VS. նկատի առնելով հետագայ բովանդակութիւնը՝ գուցէ, վերականգնելի է հէնց համառօտի հերթականութիւնը. Սուքրեանի տողատակի ծնթ-ն է.* «Այսպէս գրի փոխանակ *Նփրկերտի*»*. հմմտ. ստորեւ, նախ. Ե.211՝* Նփրկեր[տ]*)*

16 *V* Շիդմա, *S* Շիթմա *փխ* Շիթ[իթ]մա[յ] *(վեր., հմմտ. ստորեւ՝ նախ. Ե.211 եւ բոլորագիր* **թ → դ***)*

17 *ADEPv* Քեղ *փխ* Քաղ *(VS) (նախորդող* որո[յ] *բառի համար Սուքրեանի մօտ մի վրիպեալ ծանօթագրում կայ՝* «Յօր. *որ*»*. այն, թերեւս, պիտի վերաբերուէր մեր յաջորդ ծանօթագրութեանը)*

18 *S* եւ *փխ* որ *(V)*

19 *V* զտատիկազս ազնուաց ձոր, *S* զՏատիկ, զԱզնուացձոր, *AE* զՏատիկս, Աղուվանաց ձոր, *P* զՏատիկ, զԱզնուաձոր *փխ* զՏատիկս, զ՚՚Ազնուաց ձոր *(վեր.)*

20 *VS չիք* զԳզեղ[ս] *(վեր.՝ ըստ համառօտի* («զԽերհեթս, զԳզեղ»)*.* [ս]*-ի յաւելումով՝ տե՛ս* **ս … ս***)*

21 *Vv¹* զսալա ձոր, *S* զՍալաձոր, *AEv¹* զՍալնոյ ձոր, *Pv* զՍանոձոր *փխ* զՍալնաձոր *(v¹)*

22 *VS չիք* եւ նաւթ *(վեր.՝ ըստ համառօտի, որտեղ* «նաւթ եւ երկաթ» *է. տե՛ս* երկ**աթ … նաւթ***)*

23 *V* Տաւրբերան *փխ* Տար[ո]ւբերան *(վեր. Սուքրեանի. ըստ Երեմեանի՝ վերականգնելի է* Տա[ւ]րուբերան [որ է կողմն Տարաւնոյ]*)*

24 *V* Ձորորդ *փխ* Ձորրորդ *(վեր. Սուքրեանի՝ ըստ այլոց. տե՛ս նախ. Ա.8, Ե.115 եւն)*

25 *V* ժ̅զ̅

26 *S* զԱսպականունեաց *փխ* զԱսպակունեաց *(V)*

27 *V* անգանի յԵփրաթ *փխ* անկանի յԵփրատ *(վեր. Սուքրեանի՝ ըստ այլոց, օր.՝ նախ. Ե.58, 307)*

28 *V* հիւսիւսոյ *փխ* հիւսիսոյ *(վեր. Սուքրեանի)*

29 *S* Սրմանց *[ըստ այլ երկերի] փխ* Սրմանձ *(V)*

30 *Այս* լերամբ*-ից յետոյ V-ի գրիչը սխալմամբ ընդօրինակել է մի ողջ տող, որն իրականում յաջորդում է 3 տող յետոյ կրկնուող* լերամբ *բառին* («մինչեւ ցնոյն Այծպտկունս, որ բաժանէ ընդ Կարին»)*, բայց նկատել է եւ բոլոր բառերի վրայ խնամքով ուղղման կայծականձեւ նշաններ դրել*